

ծրագիրը իրագործել: Կէս դիշերը անց՝ երբ բոլորը քունի մէջ են, Ֆէտայինները կը մտնեն դիւզ, ոստիկանատան եւ միւտիրին տան դուռները կը բռնեն, իսկ միւս կողմէ դրան առջեւ կը դիզեն վառելու համար չոր ցախ:

Երբ չներու հաջոյցէն կ'արթննան ոստիկանները, Ախօն եւ Փիթարի Մանուկը կը ըստպանան որջ որջ վառել բոլորը, եթէ հանդիստ չմնան. եթէ հանդիստ մնան, իրենց բան չկայ, եկած են Շաֆիսին եւ Օմարին հողին առնելու: Ոստիկանները ճար չունէին, պիտի լռէին. միայն մէկը չենթարկուիր ու կրակ կը բանայ, բայց կը սպանուի տեղն ու տեղը:

Ղազար, Չօյօ եւ քանի մը ընկերներ ինկած են Շաֆիսին փնտռելու, ան չկայ գիւղին մէջ, փախած են նաեւ Օմար եւ Գէորգ: Ի վերջոյ կը գտնեն Շաֆիսին պահուրտած կորեկի ամբարին մէջ, կը բերեն ոստիկանատան առջեւ եւ, ահարեկուած ոստիկաններուն ու ժողովրդեան աչքերուն առջեւ, հրացանները Շաֆիսիի վրայ դնելով կը կրակեն: Հրացանի բոցերէն կը բռնկին Շաֆիսի շորերը. ան կը սկսի այրիլ: Ֆէտայինները մնաք բարով կ'ըսեն ահարեկուած միւտիրին եւ ոստիկաններուն եւ կը հեռանան դէպի լեռները:

Այս ահարեկումը ունեցաւ իր դրական եւ

բացասական հետեւանքները:

Դրականը այն էր, որ կառավարութիւնը բանտ դրաւ Զիարէթի միւտիրն ու ոստիկանները, զանոնք մեղադրելով որ չէին պաշտպանած Շաֆիսին: Բայց մինչեւ Սահմանադրութիւն՝ կառավարութիւնը չգտաւ միւտիր մը, որ յանձն առնէր զալ Զիարէթ, ուստի միւտիրը լիքը փոխադրեցին մօտակայ քիւրդ գիւղ մը: Օմարը իսպառ հեռացաւ Զիարէթէն, անոր հողերը սկսան մշակել հայերը, իսկ Գէորգ էֆ. նախ ապաստանեցաւ քրդական գիւղերը, յետոյ Մուշ: Իսկ Շաֆիսիի սպանումը այնքան սուկում պատճառած էր բոլորին, մանաւանդ յայտնի ու զազանի ոստիկաններուն, որ Տարօնի մէջ մէկ ծայրէն միւտը կ'ըսէին. «Քեաֆիր են Ֆէտայիք, փրկութիւն չկայ»:

Բացասական հետեւանքը այն էր, որ կառավարութիւնը խտտացուց իր հետապնդումները, զօրքերը մեծ զանգուածներով սկսան հետապնդել մեզ, հրահանդ ունենալով բռնել մեզ եւ մոխիր դարձնել: Իսկ մենք արիւնը աչք առած էինք, ատկէ չէինք սարսափիր. միայն դոճ էինք որ այժմ բոլորը կը զգային, թէ մեր բախտին հետ զիւրութեամբ կարելի չէ խաղալ: Արդէն մեր փնտռածն ալ այդ էր:

(Շարունակելի)

# ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ

(ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)

Գրեց՝ ԱՐՏ. ԱՖԵՂԵԱՆ

## I

Իւրաքանչիւր մի ազգ, որ ձեռք է բերել որոշ հասունութիւն եւ ձգտում է քաղաքական ու բոյն կեանքի սեփական հայրենիքում, պարտաւոր է յստակօրէն ձեւակերպել իր ազգային խեղճը, ինչպէս նաեւ՝ մշակել նրան հետապնդելու բոլոր հնարաւոր եւ նպատակայարմար միջոցները: Ուրիշ խօսքով՝ ինքնուրոյն կեանքով ապրել ուղող ամէն մի ժողովուրդ պէտք է ունենայ իր ազգային քաղաքականութիւնը:

Անհրաժեշտ է պարզել ուրեմն այն հիմնական խնդիրը, թէ՛ ո՞րն է մեր ազգային քաղաքականութեան առարկան (Object) եւ որը՝ նրա ենթական (Subject): Այսինքն՝ ի՞նչն է կազմում մեր ազգային-քաղաքական ձգտումների կէտ-նպատակը, ա՛յն, որ հանուր է ազգի ամբողջութեանը, ո՞րն է մեր զոյութեան խարխիւր, այն նիւթական պատուանդանը, որի վրայ պիտի կառուցուի ու բարգաւաճի նա: Եւ յետոյ. ո՞րն է այն ոյժը, նիւթական եւ բարոյական կարողութեանց ամբողջ-